Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզում 2019 թվականին քաղաքաշինության բնագավառում կատարված աշխատանքների մասին

- **ՀՀ վարչապետի 2019 թ. մարտի 19-ի 278-Ա որոշմամաբ ստեղծված հանձնաժողովի կողմից հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերով մարզի համայնքներում իրականացվել է 22 ծրագիր, որն իր մեջ ընդգրկում է 40 օբյեկտ – 576 157.34 հազ. դրամ գումարով այդ թվում՝**

I. Գլաձոր համայնք - **68 455.0** հազ.դրամ

1. Գետափ և Վերնաշեն բնակավայրերի խաղահրապարակների կառուցում – 14 488.0 հազ.դրամ,
2. Գետափ բնակավայրի մշակույթի տան ֆոտովոլտային կայանի տեղադրում – 15 394.0 հազ.դրամ,
3. Գետափ բնակավայրի գազաֆիկացում – 18 610.0 հազ.դրամ,
4. Գետափ բնակավայրի ջեռուցման համակարգի իրականացում- 7 845.0 հազ.դրամ,
5. Գլաձոր բնակավայրի մշակույթի տան արտաքին և ներքին դռների ու պատուհանների փոխում -12 118.0 հազ.դրամ:

II. Մալիշկա համայնք -**33 648.0** հազ.դրամ

1. Մալիշկա բնակավայրի ներհամայնքային փողոցների մասնակի ասֆալտապատում -33 648.0 հազ.դրամ:

III. Զառիթափ համայնք – **65 778.0** հազ.դրամ

1. Սերս և Բարձրունի բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի և գլխամասային կառույցների հիմնանորոգում -35.690 հազ.դրամ,
2. Զառիթափ բնակավայրի գազատարի ներքին ցանցի կառուցում – 30.088 հազ. դրամ:

IV. Վայք համայնք – **15 529.0** հազ.դրամ

1. Վայք քաղաքի կարիքների համար արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում – 15 529.0 հազ.դրամ:

V. Ջերմուկ համայնք – **85 817.0** հազ.դրամ

1. Ջերմուկ քաղաքի մարզադպրոցի մասնաշենքի հիմնանորոգում և արդիականացում -34 433.0 հազ. դրամ,
2. . Ջերմուկ քաղաքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀՀՈԱԿ-ի Ձախափնյա թաղամասի մասնաշենքի ձմեռային այգու հիմնանորոգում -19 004.0 հազ. դրամ,
3. Կեչուտ թաղամասի մանկապարտեզի մասնաշենքի 2 հարկերի և տանիքի հիմնանորոգում – 27 301.0 հազ. դրամ,

4. Գնդեվազ բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի մասնաշենքի տանիքի հիմնանորոգում -5 079.0 հազ.դրամ:

VI. Եղեգիս համայնք – **76 196.6** հազ. դրամ `

1. Թառաթումբ բնակավայրի փողոցային լուսավորության անցկացում-10000.0 հազ. դրամ,
2. Արտաբույնք բնակավայրի փողոցային լուսավորության անցկացում-8 130.0 հազ. դրամ,
3. Եղեգիս բնակավայրի փողոցային լուսավորության անցկացում-4 260.0 հազ. դրամ,
4. Աղնջաձոր բնակավայրի ոռոգման ցանցի կառուցում -18 649.0 հազ. դրամ,
5. Քարագլուխ բնակավայրի ոռոգման ցանցի կառուցում -12 082.0 հազ. դրամ,
6. Շատին բնակավայրի ոռոգման ցանցի կառուցում -16 110.0 հազ. դրամ,
7. Շատին բնակավայրի մանկապարտեզի շենքի վերանորոգում-նախատեսված է - 42 821.0 հազ. դրամ: Պայմանագրային գինը կազմում է 29 900.0 հազ.դրամ, որից ընթացիկ տարում կատարվել է 6 965.6 հազ.դրամի շինմոնտաժային աշխատանքներ: Շարունակությունը և լրացուցիչ ուսումնասիրությունից հետո ամրացման համար նախատեսված աշխատանքները կկատարվի 2020 թվականին:

VII. <u>Եղեգնաձոր համայնք</u> – **65 981.74** հազ. դրամ՝

Եղեգնաձոր քաղաք

1. Գլաձորյան փողոցի հատվածի նորոգում-12 473.5 հազ. դրամ,
2. Անդրանիկի փողոցի նորոգում-13 691.2 հազ. դրամ,
3. Կամոյի 2^{ա} բնակելի շենքի բակի նորոգում-14 963.52 հազ. դրամ,
4. Արսենյան 9 և Միկոյան 13 բնակելի շենքերի բակերի նորոգում-17 415.72 հազ. դրամ,
5. Լևոնյան փողոցի լուսավորության ցանցի նորոգում-7 437.8 հազ. դրամ:

VIII. Արենի համայնք – **164 752.0** հազ. դրամ՝

1. Արենի բնակավայրի «Նորք» թաղամասի ճանապարհի փոսային լցում, ասֆալտապատում – 1 000.0 հազ.դրամ,
2. Աղավնաձոր բնակավայրի 2-րդ փողոցի ասֆալտապատում – 70 750.0 հազ.դրամ ,
3. Աղավնաձոր բնակավայրի «Խանիձոր-Աբանա» ոռոգման ջրագծի կառուցում –4 600.0 հազ.դրամ,
4. Ագարակաձոր բնակավայրի ոռոգման ջրագծի կառուցում – 14 950.0 հազ.դրամ,
5. Արփի բնակավայրի օրվա կարգավորիչ ջրամբարի ծածկի կառուցում – 8484.0 հազ.դրամ,

6. Արփի բնակավայրի կոյուղագծի կառուցում – 8 860.0 հազ.դրամ,
7. Արփի բնակավայրի 1000քմ փոսային լցում, 1080քմ ասֆալտապատում, ընդհանուր գումարը 26 030.0 հազ.դրամ, որից կատարված է մոտավորապես 20 % – 4 975.0 հազ.դրամի: Շարունակությունը կկատարվի 2020 թվականին,
8. Ելփին բնակավայրի խմելու ջրի «Դիդվան» ջրագծի կառուցում 500 գծմ- 2975.0 հազ. դրամ,
9. Չիվա բնակավայրի ոռոգման ջրագծի հիմնանորգում – 5 550.0 հազ.դրամ,
10. Չիվա բնակավայրի գյուղամիջյան ճանապարհի փոսային լցում – 7 783.0 հազ.դրամ,
11. Ռինդ բնակավայրի Մակադան փողոցի և «Ջրաղացի դուռ»- «Եղեգնալիճ» ոռոգման ջրագծերի կառուցում – 13 780.0 հազ.դրամ,
12. Ռինդ բնակավայրի մանկապարտեզ տանող փողոցի ասֆալտապատում՝ ընդհանուր գումարը -43 690.0 հազ.դրամ, կատարված է մոտավորապես 50 % , որը կազմում է – 21 045.0 հազ.դրամ: Շարունակությունը կկատարվի 2020 թվականին:

❖ **Ռազմավարական զարգացման գործակալության միջոցներով իրականացվել է – 69666.7 հազ. դրամ, որից համայնքների համաֆինանսավորմամբ 26420.06 հազ. դրամ գումարով այդ թվում՝**

I. Գլաձոր համայնք

1. Գետափ բնակավայրի ջրագծի կառուցում,խմոցների տեղադրում և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում - 7 180.3 հազ.դրամ, որից 3 916.5 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից:

II. Զառիթափ համայնք

1. Զառիթափ բնակավայրում ջրխմոցների , հովվի կացարանների կառուցում – 5995.7 հազ.դրամ, որից 1 141.2 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
2. Սերս բնակավայրում ջրխմոցների կառուցում – 2 866.5 հազ.դրամ, որից 1419.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
3. Խնձորուտ բնակավայրում մակատեղի, ջրախմոցների , հովվի տնակի կառուցում – 6 744.66 հազ.դրամ, որից 179.36 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
4. Սարավան բնակավայրում ջրախմոցների տեղադրում – 2 816.5 հազ.դրամ, որից 961.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից:
5. Գոմք բնակավայրում մակատեղի, ջրախմոցների , հովվի տնակի կառուցում – 6 575 հազ.դրամ, որից 257.8 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,

6. Նոր Ազնաբերդ բնակավայրի ջրախմոցների և դաշտավայրով ճանապարհների բարեկարգում – 1 158.0 հազ.դրամ, որից 390.2 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից:

III. Եղեգիս համայնք

7. Շատին բնակավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում - 2 160.0 հազ.դրամ, որից 1 080.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
8. Արտաբույնք բնակավայրի դաշտամիջյան ճանապարհի վերանորոգում – 1200.0 հազ.դրամ, որից 600.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
9. Հորս բնակավայրում հովվի կացարանի կառուցում – 1 800.0 հազ.դրամ, որից 900.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
10. Հորս բնակավայրում մակատեղի կառուցում – 5880.0 հազ.դրամ, որից 2 940.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
11. Սալլի բնակավայրում մակատեղի կառուցում – 5880.0 հազ.դրամ, որից 2940.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
12. Վարդահովիտ բնակավայրում ջրախմոցների տեղադրում – 1200.0 հազ.դրամ, որից 600.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից:
13. Քարագլուխ բնակավայրում մակատեղի կառուցում – 5880.0 հազ.դրամ, որից 2 940.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
14. Հորբատեղ բնակավայրի դաշտամիջյան ճանապարհի վերանորոգում – 1320.0 հազ.դրամ, որից 660.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից:

IV. Արենի համայնք

1. Չիվա բնակավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում, - 2 460.0 հազ.դրամ, որից 1 230.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
2. Արփի բնակավայրի «Հոփիկ» հանդամասի ճանապարհի բարեկարգում – 3576.0 հազ.դրամ, որից 1 778.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
3. Ագարակաձոր բնակավայրի «Բոլորաբերդ» հանդամասում հովվի կացարանի կառուցում – 1 560.0 հազ.դրամ, որից 780.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից,
4. Գնիշիկ բնակավայրի ջրագիծ, ջրախմոցի կառուցում – 3 414.0 հազ.դրամ, որից 1 707.0 հազ. դրամը ներդրում համայնքի կողմից:

- **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել է մարզի համայնքների առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների 9 ծրագիր, կատարված 78972.76 հազ.դրամ գումարով այդ թվում՝**

<u>I.Եղեգնաձոր համայնք</u>

Եղեգնաձոր քաղաք

1. Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում(առանց տանիք) - 27480.0 հազ. դրամ, 2019թ. կատարվել է –4623.307 հազ. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ, շարունակությունը կկատարվի 2020թ-ին,
2. Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում-24720.4, 2019թ. կատարվել է – 4516.4 հազ. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ, շարունակությունը կկատարվի 2020թ-ին:

II. Արենի համայնք

1. Ագարակաձոր բնակավայրի մանկապարտեզի շենքի տանիքի հիմնանորոգում- 10440.0 հազ. դրամ,
2. Չիվա բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգում – 17051.4 հազ. դրամ,
3. Արենի համայնքի Մ-2-Արենի-Խաչիկ-Գնիշիկ-Եղեգնաձոր հանրապետական նշանակության ավտոճանապարհի առաջին կիլոմետրում Արենի գյուղի մեջ Արփա գետի վրա կառուցված կամրջի վերանորոգում պայմանագրային գինը – 24582.6 հազ. դրամ, 2019թ. կատարվել է –12447.75 հազ. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ, շարունակությունը կկատարվի 2020թ-ին:

III. Եղեգիս համայնք

1. Արտաբույնք բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի կառուցում- 6216.9հազ. դրամ,
2. Գողթանիկ բնակավայրի դպրոցի շենքի տանիքի վերանորոգում – 8604.6 հազ. դրամ,
3. Հորս բնակավայրի օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգում-14400.0 հազ. դրամ , փոխանցվել է և կկատարվի 2020թ-ին,
4. Հորբատեղ բնակավայրի աղբյուրակապի և օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգում-6960.0 հազ. դրամ , փոխանցվել է և կկատարվի 2020թ-ին:

IV.Գլաձոր համայնք

1. Վերնաշեն և Գլաձոր բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում-15077.6 հազ. դրամ:

- **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ Ասիական զարգացման բանկի և համաշխարհային բանկի միջոցներով կատարվել է՝ 437 959.6 հազ. դրամի աշխատանքներ**

I.Ջերմուկ համայնք

Ջերմուկ քաղաք

1. Կեչուտ թաղամասում ներթաղամասային ճանապարհների և մայթերի բարեկարգում- 159 610.869 հազ. դրամ,
2. Ձախափնյա և Աջափնյա թաղամասերի բնակելի շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ – 81 129.168 հազ. դրամ,

3. Քաղաքային զբոսայգու բարեկարգման, ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ- 25 721.850 հազ. դրամ:

II. Արենի համայնք

1. Ռինդ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում պայմանագրային գումարը 129 190.693 հազ.դրամ: 2018 թ-ին կատարվել է 44 072.76 հազ.դրամի: 2019թ-ին՝ - 85 117.929 հազ. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ:

III.Եղեգնաձոր համայնք

Եղեգնաձոր քաղաք

1. Թիվ 1 նոր դպրոցի կառուցում –պայմանագրային գումարը 1 169 373.082 հազ. դրամ: 2019 թ-ին կատարվել է 86 379.8 հազ.դրամի շին. մոնտաժային աշխատանքներ:Ավարտը 2021թ.:

- **Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվիրատվությամբ-155 542.4 հազ. դրամ, այդ թվում՝ համայնքների համաֆինանսավորումը - 25 943.5 հազ. դրամ**

I.Վայք համայնք

1. Վայք քաղաքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-19032.0 որից համայնքի կողմից ներդրում-3540.0 հազ. դրամ :

II.Ջերմուկ համայնք

2. Ջերմուկ քաղաքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-18719.5 որից համայնքի կողմից ներդրում-3227.5 հազ. դրամ :

III.Արենի համայնք

1. Ելփին բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-17736.0, որից համայնքի կողմից ներդրում-2244.0 հազ. դրամ ,
2. Արենի բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-18048.0, որից համայնքի կողմից ներդրում-2400.0 հազ. դրամ,
3. Խաչիկ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-17736.0, որից համայնքի կողմից ներդրում-2244.0 հազ. դրամ,
4. Աղավնաձոր բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-17736.0, որից համայնքի կողմից ներդրում-2244.0 հազ. դրամ :

IV.Եղեգիս համայնք

1. Արտաբույնք բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-16000.0, որից համայնքի կողմից ներդրում-2800.0 հազ. դրամ :

V.Զառիթափ համայնք

1. Զառիթափ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-15486.9 որից համայնքի կողմից ներդրում-2244.0 հազ. դրամ :

VI.Մալիշկա համայնք

1. Մալիշկա բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում-17843.0, որից համայնքի կողմից ներդրում-3200.0 հազ. դրամ :

VII.Գլաձոր համայնք

1. Գլաձոր բնակավայրում կառուցվել է մինի ֆուտբոլի դաշտ-15048.0 հազ. դրամ, որից ներդրում համայնքի կողմից 1800.0 հազ. դրամ :

- **ՎիվաՍել –ՄՏՍ- և Վայրի բնության ու մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներով՝- 61 394.55 հազ. Դրամ**

I.Արենի համայնք

1. Գնիշիկ բնակավայրի ոռոգման ջրագծի կառուցում – 5 667.177 հազ.դրամ,
2. Գնիշիկ բնակավայրի ոռոգման ջրագծի վերակառուցում – 4227.374 հազ.դրամ:

II. Վայք համայնք

1. Փոռ բնակավայրում փողոցային լուսավորության կառուցում (30 լուսատու)– 7500.0 հազ.դրամ:

III. Զառիթափ համայնք

1. Զառիթափ բնակավայրում փողոցային լուսավորության կառուցում (41 լուսատու)– 10250.0 հազ.դրամ,
2. Սերս բնակավայրում փողոցային լուսավորության կառուցում (40 լուսատու)– 10000.0 հազ.դրամ:

IV. Եղեգիս համայնք

1. Սալլի բնակավայրում փողոցային լուսավորության կառուցում (40 լուսատու)– 10000.0 հազ.դրամ,
2. Աղնջաձոր բնակավայրում փողոցային լուսավորության կառուցում (38 լուսատու)– 9500.0 հազ.դրամ:
3. Հերմոն բնակավայրում փողոցային լուսավորության կառուցում (17 լուսատու)– 4250.0 հազ.դրամ:

- **Հաբիթաթ Ֆոր Հյումեն Արմենիա-ի միջոցներով՝ 27 975.17 հազ.դրամ**

I.Վայք համայնք

1. Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի փողոցի 23 և Շահումյան փողոցի 24 բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի հիմնանորոգում – 27975.17 հազ.դրամ:

- **Համայնքային բյուջեի միջոցներով՝ 67 545.66 հազ.դրամ**

I.Վայք համայնք

Վայք քաղաք

1. Թիվ 2 մանկապարտեզի լվացքատան վերանորոգման և 30 խմ կոյուղաջրերի կուտակման հորի կառուցում – 4 200.0 հազ.դրամ,
2. Ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացում l=500 գծմ-2200.0 հազ.դրամ:

3. Մշակույթի տանը ռոբոտաշինության սենյակի նորոգում-4 388.030 հազ. դրամ :

III.Եղեգնաձոր համայնք

Եղեգնաձոր քաղաք

1. Արսենյան փողոցի № 9 շենքի բակի ցանկապատի վերանորոգում – 824.964 հազ.դրամ,
2. Անդրանիկի փողոցի փլուզված պատի վերանորոգում – 70.360 հազ.դրամ:

IV.Արենի համայնք

Համայնքի ՀՈԱԿ-ի միջոցով կատարված ընթացիկ շինարարական աշխատանքներ – 30 410.708 հազ.դրամ:

V. Ջերմուկ համայնք

1.Ասֆալտապատվել է Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 2-րդից 14-րդ շենքերի միջև ընկած մայթը և ճոպանուղի տանող ճանապարհի սկզբնամասը, Մյասնիկյան, Վարդանյան, Շահումյան, Մաշտոցի, Ազատամարտիկների, Մելիք-Ադամյան, Չարենցի և Իսակովի փողոցներում կատարվել են փոսային նորոգման աշխատանքներ /պայմանագրային գինը՝ 17 549.160 հազ. դրամ,

2. Համայնքի գյուղական բնակավայրերում կատարվել են խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման ցանցի նորոգման, ճոպանուղու կաթսայատան, ղեկավարվող կայանի շենքի, 2-րդ հենակայանի և հարթակի մասնակիվերանորոգման, Ջերմուկ քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի ծխատար և օդատար համակարգերի կառուցման, շենքերի արտաքին պատերի հիմնանորոգման աշխատանքներ /պայմանագրային գինը՝ 4 878.375 հազ. դրամ,

3. Ջերմուկ քաղաքում ճանապարհային երթևեկության նշանների տեղադրում և գծանշում /պայմանագրային գինը՝ 1 900.120 հազ. դրամ,

4. Ջերմուկ և Վայք համայնքների ղեկավարների համատեղ ջանքերով իրականացվում է զբոսաշրջիկների հետաքրքրությանն արժանացած Վայք-Ջերմուկ հին ճանապարհի քարերից մաքրման աշխատանքները /պայմանագրային գինը՝ 750.0 հազ. դրամ,

5. Գնդեվազ գյուղի ներբնակավայրային ճանապարհների բարեկարգում /պայմանագրային գինը՝ 434.0 հազ. դրամ:

<u>ԸՆԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ - 1 475 214.18 հազ.դրամ</u>

<u>Ճարտարապետության բնագավառ</u>

Աշխատանք է տարվել միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում գտնվող կիսակառույց շինությունների լիարժեք ուսումնասիրման և ինքնակամ շինությունների վերացման ուղղությամբ:

Համաձայնություն ենք տվել ՀՀ կառավարության որոշումների մեջ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններին և որոշման նախագծերին՝ թվով 12 հատ:

Նշված ժամանակահատվածում առաջարկություն ենք ներկայացրել ՀՀ քաղաքաշինական կոմիտե համայնքներում հողի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ՝ թվով 4 հատ:

Հատուկ պահպանվող տարածքներում կառուցապատման առաջադրանքների թույլտվություններ ստանալու և սահմանված ժամկետների վրա հսկողություն սահմանելու աշխատանքներ :

Նշված ժամանակահատվածում առաջարկություն ենք ներկայացրել ՀՀ քաղաքաշինական կոմիտե Եղեգնաձոր, Ջերմուկ քաղաքների գլխավոր հատակագծերում փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ թվով 2հատ, որոնք ընթացքի մեջ են:

ՀՀ ՏԿ և ենթակառուցվածքների նախարարության հանձնարարականով կատարվել է համայնքների աղբավայրերի և աղբանոցների օնլայն քարտեզավորման աշխատանքներ :

Համակարգվել է մարզի քաղաքային համայնքներում նոր կառուցվելիք բազմաբնակարան շենքի համար հատկացվող տարածքների ընտրության կազմակերպման աշխատանքները:

Կատարվել է մարզի 45 բնակավայրերի 6 համակցված տարածական պլանավորման փաստաթուղթի կազման համար համայնքների կողմից ելակետային տվյալների տրամադրման աշխատանքների կազմակերպման , ինչպես նաև արդյունքների քննարկման կազմակերպչական աշխատանքներ:

Բացատրական աշխատանքներ ենք տարել մարզում շինթույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ և ընդունել ենք համայնքներից թվով 166 շինարարության թույլտվություն , 1 քանդման թույլտվություն, 1 շինարարության թույլտվության կասեցում:

Բոլոր համայնքներին պարբերաբար տեղեկացվել է քաղաքաշինության բնագավառում օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների մասին և ուսումնասիրվել է համայնքներում կայացված որոշումների (քաղաքաշինության բնագավառում) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Հետևողական աշխատանքներ ենք տանում համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային թիվ 5222-ԱՄ ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր քաղաքում կառուցվելիք նոր հիվանդանոցի շենքի հողհատկացման, որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրման, հողամասի բաժանման, ՀՀ անշարժ գույքի կադաստրում գույքի գրանցման, հողամասերի

փոխանակության վերաբերյալ որոշման նախագծի կազմման աշխատանքների ուղղությամբ:Այս պահին գործընթացը գույքի ընդունման –հանձնման փուլում է:

<u>Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ</u>

Վայոց ձորի մարզում ազգաբնակչությունը ապահոված է շուրջօրյա խմելու ջրով:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր :

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի բաժանորդների թիվը 8880 է, որից՝ 683-ը իրավաբանական կազմակերպություններ:

Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից :

Գրությամբ առաջարկվել է համայքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ջրամատակարարման համակարգերում արձանագրված թերությունները շտկելու ուղղությամբ : Արդյունքում 2019թ. ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել:

Մարզի 8 համայնքների ղեկավարների հետ համագործակցելով հավաքագրվել են համայնքներում առկա ***<u>ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառի</u>*** հիմնախնդիրները, որոնք պարբերաբար թարմացվում են:

Վայոց ձորի մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17 բնակավայրը: Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը:

Մարզում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը 2019թ-ի դրությամբ 8326 է, որից 4347 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, իսկ 3979 անհատական տներ: Բաժանորդների թիվը 2018 թ-ի համեմատ ավելացել է 142-ով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի
քաղաքաշինության վարչության պետ՝ Ա. Հովսեփյան